

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության Հայեցակարգը (այսուհետ Հայեցակարգ) արտահայտում է ներդրումային քաղաքականության ընդհանուր մոտեցումներն ու ռազմավարությունը և իրենից ներկայացնում է խնդիրների, սկզբունքների ու նպատակների համակցություն:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից և ուղղություններից է: Այն նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավմանը և, վերջինիս հիման վրա, տնտեսական զարգացման ապահովմանը:

Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծ չափով պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը:

Նախադրյալներ

Ներդրումների խրախուսումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության որոշիչ ուղղություններից մեկը: Այն ամրագրվում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրերում:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա և նպատակաուղղված է Հայաստանի ինտեգրացմանը համաշխարհային տնտեսության մեջ:

Քաղաքականության այս դրույթի արդյունավետ իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, որն ամրագրված լինելով 1994թ.-ին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով՝ վերահաստատվում է «Ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքում: Վերջինս նպատակ ունի նպաստել տեղական և օտարերկրյա ներդրողների գործունեության համար հավասար, կայուն և կանխատեսելի ներդրումները կարգավորող օրենսդրության և գործարար միջավայրի ձևավորմանը:

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող արդյունավետ գործող մասնագիտացված ենթակառույցներ:

Այդ գործառույթներն իրականացնում են հետևյալ պետական կառույցները՝

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն - պատասխանատու է ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման, ներդրումային միջավայրի բարելավման, ՀՀ ներդրումային վարկանիշի բարձրացման համար:

Գործարարության Աջակցման Խորհուրդ - պատասխանատու է Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի շարունակական բարելավման, վարչական խոչընդոտների նվազեցման և գործարարների առջև ծառայած ընդհանուր խնդիրների կարգավորման համար:

Զարգացման Հայկական Գործակալություն - պատասխանատու է ներդրումային քաղաքականության իրականացման համար: Ծառայություններ է տրամադրում ներդրողներին «մեկ կանգառի կենտրոնի» սկզբունքով:

ՀՀ արժեթղթերի հանձնաժողով - ապահովում է ներդրողների պաշտպանությունը, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորումն ու պահպանումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

Ներդրումային քաղաքականության նպատակները

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է՝

տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

Ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը պետք է իրագործվի՝

- ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման,
- ներդրումային ոլորտը կարգավորող իրավա-պայմանագրային դաշտի կայացման,
- վարչարարական խոչընդոտների վերացման,

- ներդրումների ներգրավման,
- ներդրումային ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմինների օպտիմալ կառուցվածքի ձևավորման,
- ներդրումները խթանող ենթակառուցյունների կայացման միջոցով:

Ներդրումային քաղաքականության սկզբունքները

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- ներդրումները կարգավորող օրենսդրության կայունության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար, ոչ խտրական պայմանների ապահովումը,
- օտարերկրյա ներդրումներին և ներդրողներին ազգային և առավել բարենպաստության ռեժիմների տրամադրումը,
- ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառումը,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,
- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումը և կիրառումը:

Ներդրումային քաղաքականության խնդիրները

Հայաստանի տնտեսական զարգացման առանցքային և առաջնահերթ խնդիրներից է ներդրումների խթանումը և աջակցումը: Խնդրի լուծումը զգալի չափով պայմանավորված է երկրում ներդրումների խթանման կուռ և արդյունավետ գործող համակարգի ձևավորմամբ:

Ներդրումների աճի ապահովումը լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոու-հաունների ներգրավումը՝ ընդհանուր և ֆինանսական կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ և այլն, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը և այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումն ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ

իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճը և երկրի տնտեսական կայուն զարգացումը:

Իրավա-պայմանագրային դաշտ

Ներդրումները կարգավորող օրենսդրությունը պետք է արտացոլի կառավարության վերաբերմունքը ներդրումների նկատմամբ և կարևորի վերջինիս խթանիչ դերը տնտեսական աճի և զբաղվածության մակարդակի բարձրացման գործում: Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար առաջնահերթ գործոններ են հանդիսանում ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի կայունությունը և կանխատեսելիությունը, որը ենթադրում է ներդրումների լիարժեք պաշտպանության իրավական երաշխավորում:

Այդ առումով կարևորվում է՝

- Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործումը,
- «Ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» միջազգային երկկողմ և բազմակողմ Համաձայնագրերի կնքման գործընթացի իրականացումը,
- Ներդրումային ոլորտը կարգավորող միջազգային համաձայնագրերին և կոնվենցիաներին միացման գործընթացի իրականացումը,
- Իրային իրավունքների առանձին դասակարգումը:

Վարչարարական խոչընդոտներ

Բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, օտարերկրյա և տեղական ներդրումների ծավալների մեծացման համար կարևորվում է ներդրումային ոլորտում վարչարարական խոչընդոտների հաղթահարման խնդիրը:

Այդ առումով անհրաժեշտ է՝

- շարունակաբար բարելավել Հայաստանի Հանրապետության գործարար և ներդրումային միջավայրը՝ ընկերությունների գրանցման, տեղակայման և գործունեության իրականացման ժամանակ անհրաժեշտ վարչարարական ընթացակարգերի պարզեցման և արդյունավետության բարձրացման ու վարչարարական մեխանիզմների զարգացման ճանապարհով,

- շարունակել դատական համակարգում դատական բարեփոխումների իրականացումը, դյուրացնել միջնորդ դատավարության զարգացումը և համակարգի կայացումը:

Ինստիտուցիոնալ (համակարգային) խնդիրներ

Ներդրումների ծավալների աճի, նրա ուղղությունների և կառուցվածքի դիվերսիֆիկացման նպատակով անհրաժեշտ է մեծ թվով նախապայմանների, բաղադրիչների համակցում՝ ներդրողի համար համապատասխան միջավայր ստեղծելու համար: Դրանց թվում բացառիկ կարևորություն ունեն ներդրումների խթանման քաղաքականությունը և համապատասխան ինստիտուցիոնալ դաշտի առկայությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն զարգացող երկրները, որոնք համակարգված ձևով իրականացրել են հստակ ներդրումային քաղաքականություն և ձևավորել են այդ քաղաքականության իրականացմանը նպաստող համապատասխան աջակցող ենթակառույցներ, հասել են հաջողության և ապահովել են տնտեսության արագ աճ:

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող լավ ձևավորված և ամբողջ ծավալով գործող ենթակառույցներ:

Այդ իսկ պատճառով չափազանց կարևորվում է՝

- ոլորտին առնչություն ունեցող շուկայական ենթակառույցներին օժանդակության ցուցաբերումը,
- ջանքերի միասնականության և արդյունավետության ապահովման նպատակով շուկայական ենթակառուցվածքի ներկա վիճակը, զարգացման խոչընդոտները և հեռանկարները երևանող քաղաքականության փաստաթղթի մշակումը,
- կորպորատիվ կառավարման բարձր ստանդարտների ներդրումը,
- արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքների օգնությամբ երկրորդային շուկայի զարգացումը:

Ներդրումային քաղաքականության առաջնահերթ միջոցառումներ

Ներդրումների ներգրավման խթանումը, նրանց զգալի ծավալների առկայությունը տնտեսությունում եղել և մնում է խիստ որոշիչ ՀՀ տնտեսական

զարգացմանը ընդունելի տեմպեր և ծավալներ ապահովելու համար: Այդ նպատակով պետք է իրականացվեն մի շարք առաջնահերթ քայլեր ներդրումների նկատմամբ վարվող քաղաքականության օրենսդրական ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով:

- Պետք է ընդունվի «Ներդրումների մասին» նոր օրենքը, օրենսդրորեն ամրագրելով տեղական և օտարերկրյա ներդրողների համար հավասար օրենսդրական դաշտի ստեղծումը: Նոր օրենքի և, որպես հետևանք, նաև վերջինիս արդյունավետ կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմերի ընդունումը հնարավորություն կտա ավելի հստակեցնել ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտը, հնարավորինս կրճատել վարչարարական խոչընդոտների առաջացման հնարավորությունները:
- Շարունակել միջկառավարական ներդրումային համաձայնագրերի կնքման գործընթացը՝ ստեղծելով լրացուցիչ երաշխիքներ օտարերկրյա ներդրողների համար: Այս համաձայնագրերի առկայությունը հատկապես կարևոր է բարձր ռիսկային երկրների համար, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանը:
- Նպաստել արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների համակարգի կայացմանը, որի հիմնական խնդիրներից պետք է լինի օտարերկրյա ներդրումների ներգրավումը:
- Երկրի տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու նպատակով հարկավոր է իրականացնել համալիր միջոցառումներ երկրի մարզերում ներդրումների խրախուսման նպատակով (տնտեսական ենթակառուցների, կապի և հաղորդակցման զարգացում, խթանման և աջակցման արդյունավետ համակարգի կիրառում): Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել և իրականացնել տարածքային զարգացման համալիր ծրագրեր:
- Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթաց մեծացումը, անհրաժեշտ է էապես փոփոխել է երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը, որում աստիճանաբար պետք է նվազեն բնական ռեսուրսների, էժան աշխատուժի առկայության դերը, միևնույն ժամանակ որոշիչ դառնան «ստեղծված ակտիվները», ինչպիսիք են բարձրորակ մասնագետները, գիտահետազոտական կառույցները, ենթակառուցների զարգացվածությունը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման և նրա լայնածավալ կիրառման վրա, որը ներկայումս հանդիսանում է երկրի մրցակցային առավելությունների բարելավման հիմնական ուղղություններից մեկը և պետք է դասվի պետական զարգացման քաղաքականության ռազմավարական խնդիրների շարքին:

- Անհրաժեշտ է ակտիվացնել և ավելի ուղղորդված դարձնել սփյուռքի հետ համագործակցությունը՝ ձևավորելով երկուստեք վստահելի և շահավետ միջավայր:
- Հայտարարել ներդրումների համար գերակա համարվող ոլորտները և ամրագրել պետության վերաբերմունքը այդ ոլորտների զարգացմանը և այնտեղ կատարված ներդրումներին:
- Ձևավորել միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգ՝ ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար:
- Նպատակաուղղված կերպով շարունակել աշխատանքները ներդրումային վարկանիշներ տրամադրող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ:
- Արդյունավետ կերպով իրականացնել միջազգային բնապահպանական կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունները՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով օտարերկրյա ներդրումների և ֆինանսական օժանդակության համար:

Եզրափակում

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության Հայեցակարգում ներկայացված ռազմավարության իրականացումը կնպաստի Հայաստանում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորմանը, ներդրումների ծավալների մեծացմանը, երկրի տնտեսական կայուն զարգացման ապահովմանը: